«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Ամսաթիվ՝	**18.04.2026թ.**
Ֆուտբոլային ակումբ՝	**«Այգ ՖԱ» ՀԿ**
Առաջնություն՝	**Մ-15Շ2 (2025-2026)**
Խաղ՝	**«Այգ-11» - «Հոկտեմբեր-11», 10.04.2026թ.**
Վարույթ՝	**15Շ2-029**

Հարգելի՛ գործընկեր,

Կից ներկայացված է 15Շ2-029 վարույթի շուրջ ՀՖՖ Կարգապահական եւ էթիկայի կոմիտեի կողմից 2026 թվականի ապրիլի 17-ին տեղի ունեցած նիստի արդյունքում կայացված որոշումը։

Խնդրում ենք որոշումն ընդունել ի գիտություն եւ ապահովել վերջինիս կատարումը՝ ՀՖՖ Կարգապահական եւ էթիկայի կանոնակարգով (2025թ. խմբագրություն) սահմանված կարգով։

Հարգանքով՝

ՀՖՖ Կարգապահական գրասենյակ

Գրասենյակի ղեկավար՝ Գայանե Զաքարյան

Հասցեատեր՝

«Այգ ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ aygararat@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական եւ էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17.04.2026թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նարեկ Ադամյան
	Արփի Լազարյան

Վարույթ՝	15C2-029
Խախտում՝	«Այգ-11» թիմի մեղքով (բժշկի բացակայությունը) խաղի չկայանալը / Հավելված 1 Ե, 20-րդ կետ
Առաջնություն՝	Մ-15C2 (2025-2026)
Խաղ՝	«Այգ-11» - «Հոկտեմբեր-11 », 10.04.2026թ.

ՀՖՖ Կարգապահական եւ էթիկայի կոմիտեն որոշեց՝

«Այգ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով: և «Այգ-11» թիմին գրանցել տեխնիկական պարտություն՝ 0:3 հաշվով:

ՀՖՖ Կարգապահական եւ էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: